Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՌԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԸՍՏ Ն. Ա. ԶԱՅՑԵՎԻ ԱՌԱՋԱԴՐԱԾ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ

ԱՄԻՐԱՂՅԱՆ Մ. Գ., ՄԱՐՈՒԹՅԱՆ Ս. Ա.
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010,Երևան, Տիգրան Մեծի 17
amiraghyanmarianna44@aspu.am
marutansvetlana44@aspu.am

Հոդվածում ներկայացվում է ավագ նախադպրոցականների տառաճանաչության ուսուցման խնդիրը, որը քննարկվում է Ն. Ա. Զայցևի կողմից առաջադրած մեթոդիկայի հիման վրա: Բաղաձայն և ձայնավոր հնչյունների զուգորդությունները մեր կողմից մշակվել են հայոց լեզվի առանձնահատկություններին համահունչ, որը թույլ է տալիս խորանարդիկների օգնությամբ կազմել տարբեր բառեր:

Բանալի բառեր. *տառաճանաչություն, ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, գրկապել, նախադպրոցական տարիք:*

Ներկայացվել է խմբագրություն 05.02.2018

Նախադպրոցականի խոսքի զարգացման կարևոր խնդիրներից մեկը տառաճանաչությունն է, որն ուսուցանվում է 5-6 տարեկանում: Տառաճանաչությունից կազմակերպվող պարապմունքների ընթացքում երեխաներին ուսուցանվում է ճանաչել մայրենի լեզվի բոլոր տառերը, ձայնավոր և բաղաձայն հնչյունները, դրանք տարբերել ըստ արտասանության [1, էջ 76-78]:

Տառաճանաչության պարապմունքները մանկապարտեզում կազմում են մայրենի լեզվի ուսուցման մի մասը և դրանց հիմնական նպատակը ոչ թե կարդալ–գրել սովորեցնելն է, այլ հնարավորին չափով երեխաներին նախապատրաստելն է դպրոցական ուսումնառությանը: Արդյունքում, երեխաները կարողանում են հիշել մայրենի լեզվի բոլոր տառերը, դրանք ճիշտ արտասանել: Սակայն, արդյո՞ք դպրոցական ուսուցման ընթացքում երեխաները կարողանում են հեշտությամբ միավորել արդեն իսկ իմացած տառերը և կարդալ: Տառաճանաչ լինելը չի ենթադրում կարդալու կարողության մատչելի յուրացում, ինչպես որ շախմատի խաղաքարերի իմացությունը չի ենթադրում շախմատ խաղալու կարողություն: Երեխաները դժվարանում են բառի մեջ իմացած տառերը երկհնչյուններով արտահայտելիս, առանձին տառերով կարդալիս: Տառաճանաչության գործընթացում տարբերում ենք հոգեբանական, լեզվաբանական և մանկավարժական կողմերը: Հոգեբանական կողմը կապվում է երեխայի զգայա-ընկալողական և ակնառու-պատկերային մտածողության հետ, երբ հնչյունների մեջ կողմնորոշվելիս երեխային օգնում են դրանց գրաֆիկական պատկերները՝ տառերը: Լեզվաբանական կողմը կապվում է լեզվի երևույթների՝ նախադասություն, բառ, հնչյուն, յուրացման հետ: Մանկավարժական կողմն ապահովում է երեխաների խոսքային կարողությունների ձևավորումն ու զարգացումը [3, էջ 7]: Ն. Ա. Զայցևի կողմից առաջադրված մեթոդիկան ապահովվում է նշված երեք կողմերի միասնությունը, որն ամբողջությամբ ներկայացված լինելով խորանարդիկների տեսքով, օգնում է

երեխաներին հեշտությամբ կողմնորոշվել մայրենի լեզվի հնչյունների մեջ, հեշտությամբ կազմել բառեր, «կարդալ» դրանք, վերլուծել ըստ հնչյունների:

Մեթոդիկայի հիքում ընկած է գրկապելով կարդալու սկզբունքը, որը ենթադրում է բաղաձայնի և ձայնավորի միավորում, առանձին ձայնավորի արտաբերում, փակ վանկում բաղաձայնի արտաբերում [2, էջ 20]: Օրինակ՝ *Ա-ՐԱ-ԳԻ-Լ, Ն-Ս-ՏԱ-ՐԱ-Ն, ՄԱ-Ն-ԿԱ-ՊԱ-Ր-ՏԵ-Զ և այլն:*

Անշուշտ, տառերով խորանարդիկները նորություն չեն, որոնց վրա տառերը պատկերված են առանձին-առանձին: Նման մոտեցումն օգնում է երեխաներին ճանաչել առանձին տառերը, սակայն դպրոցական ուսուցման ժամանակ դրանց համակցումը դառնում է դժվար: Ն.Ա. Զայցևի կողմից ստեղծած խորանարդիկների վրա տառերը պատկերված են ոչ թե առանձին–առանձին, այլև հիմնականում երկհնչյունների տեսքով՝ բաղաձայն և ձայնավոր հնչյունների զուգորդմամբ, առանձին ձայնավոր և բաղաձայն հնչյուններով: Խորանարդիկներն ունեն տարբեր գույներ, չափեր, հնչողություն, որոնց հիմքում ընկած է հնչյունների դասակարգման սկզբունքները:

Մեթոդիկայի մեջ հաշվի են առնված *բնահարմարության, ակնառու–պատկերային մտածողությունից բառատրամաբանական մտածողության և մասնավորից դեպի ընդհանուրին անցման, ընկալման միջոցով դիտողականության ապահովման, նյութի համակարգված հաղորդման սկզբունքները* [2, էջ 38-40]:

Խորանարդիկների վերոնշյալ առանձնահատկությունները թույլ են տալիս ոչ միայն նախադպրոցական տարիքի, այլ նաև վաղ տարիքի երեխաներին հեշտությամբ յուրացնել մայրենի լեզվի տառերը, հնչյունները, դրանցով կազմել բառեր և կարդալ: Խորանարդիկներին ծանոթ երեխաներն սկսում են ուսումնական տարվա առաջին շաբաթվա ընթացքում հեշտությամբ վանկատել, կարդալ, բառերի մեջ առանձնացնել հնչյունները: Դրանք նպաստում են նաև երեխաների տրամաբանական մտածողության ձևավորմանը:

Նշված մեթոդիկայի վերոհիշյալ նկարագրությունն ու դրանից ձեռք բերված արդյունքները մեզ դրդեցին հայոց լեզվի հնչյունական համակարգը ներկայացնել հայտնի սկզբունքով: Աղյուսակ 1-ում ներկայացված են բաղաձայն և ձայնավոր տառերի կապակցությունները.

Բաղաձայն և ձայնավոր տառերի կապակցությունները.

			Բ	Գ	Դ	Զ	Ժ	Լ	Շ	Ղ	Մ	Ց	Ն	Ջ	Ռ	Վ	Ր
Ա			ԲԱ	ԳԱ	ԴԱ	ԶԱ	ԺԱ	ԼԱ	ՇԱ	ՂԱ	ՄԱ	ՑԱ	ՆԱ	ՋԱ	ՌԱ	ՎԱ	ՐԱ
	Ի		ԲԻ	ԳԻ	ԴԻ	ԶԻ	ԺԻ	ԼԻ	ՇԻ	ՂԻ	ՄԻ	ՑԻ	ՆԻ	ՋԻ	ՌԻ	ՎԻ	ՐԻ
Ու			ԲՈՒ	ԳՈՒ	ԴՈՒ	ԶՈՒ	ԺՈՒ	ԼՈՒ	ՇՈՒ	ՂՈՒ	ՄՈՒ	ՑՈՒ	ՆՈՒ	ՋՈՒ	ՌՈՒ	ՎՈՒ	ՐՈՒ
	Օ	(Ո)	ԲՈ	ԳՈ	ԴՈ	ԶՈ	ԺՈ	ԼՈ	ՇՈ	ՂՈ	ՄՈ	ՑՈ	ՆՈ	ՋՈ	ՌՈ	ՎՈ	ՐՈ
Է	(Ե)		ԲԵ	ԳԵ	ԴԵ	ԶԵ	ԺԵ	ԼԵ	ՇԵ	ՂԵ	ՄԵ	ՑԵ	ՆԵ	ՋԵ	ՌԵ	ՎԵ	ՐԵ
	Ը																
			Խ	Ծ	Կ	Հ	Ճ	Շ	Պ	Ս	Տ	Ֆ					
Ա			ԽԱ	ԾԱ	ԿԱ	ՀԱ	ՃԱ	ՇԱ	ՊԱ	ՍԱ	ՏԱ	ՖԱ					
	Ի		ԽԻ	ԾԻ	ԿԻ	ՀԻ	ՃԻ	ՇԻ	ՊԻ	ՍԻ	ՏԻ	ՖԻ					
Ու			ԽՈՒ	ԾՈՒ	ԿՈՒ	ՀՈՒ	ՃՈՒ	ՇՈՒ	ՊՈՒ	ՍՈՒ	ՏՈՒ	ՖՈՒ					
	Օ	(Ո)	ԽՈ	ԾՈ	ԿՈ	ՀՈ	ՃՈ	ՇՈ	ՊՈ	ՍՈ	ՏՈ	ՖՈ					
Է	(Ե)		ԽԵ	ԾԵ	ԿԵ	ՀԵ	ՃԵ	ՇԵ	ՊԵ	ՍԵ	ՏԵ	ՖԵ					
	Ը																
			Թ	Չ	Ց	Փ	Ք										
Ա			ԹԱ	ՉԱ	ՑԱ	ՓԱ	ՔԱ										
	Ի		ԹԻ	ՉԻ	ՑԻ	ՓԻ	ՔԻ										
Ու			ԹՈՒ	ՉՈՒ	ՑՈՒ	ՓՈՒ	ՔՈՒ										
	Օ	(Ո)	ԹՈ	ՉՈ	ՑՈ	ՓՈ	ՔՈ										
Է	(Ե)		ԹԵ	ՉԵ	ՑԵ	ՓԵ	ՔԵ										
	Ը																
			ԵՎ														
				և													

Աղյուսակում պատկերված են ձայնեղ բաղաձայն հնչյունների և ձայնավորների կապակցությունները (առաջին շարք), խուլ բաղաձայն հնչյունների և ձայնավորների (երկրորդ շարք) և շնչեղ խուլ բաղաձայն և ձայնավոր հնչյունների կապակցությունները (երրորդ շարք):

Աղյուսակի ձախ կողմում առանձին սյունակով ներկայացված են ձայնավոր հնչյունները, իսկ վերջում՝ ԵՎ(և) տառը, որը չի միանում այլ հնչյուններին, քանի որ այն իրենից ներկայացնում է **յ + է + վ** հնչյունների միացություն:

Ներկայացված հնչունախմբերի միջոցով հնարավոր է դառնում ստեղծել ցանկացած բառ՝ համաձայն վերը նշված սկզբունքի: Փորձենք մի քանիսը ներկայացնել օրինակների տեսքով: Օրինակ, եթե երեխան ցանկանում է խորանարդիկներով կազմել *«խաղալիք», «արեգակ», «մանկապարտեզ»* բառերը, նա պետք է միավորի հետևյալ հնչյունները՝ ԽԱ-ՂԱ-ԼԻ-Ք, Ա-ՐԵ-ԳԱ-Կ, ՀԱ-ՄԱ-ԿԱ-Ր-ԳԻ-Զ:

Երեխաներն առավել դյուրին են կարողանում կազմել բառեր, երբ մանկավարժի կողմից կիրառվում են զանազան հնարներ ու խաղային տարրեր:

Փորձենք ներկայացնել օրինակներ 5-6 տարեկան երեխաների հետ մեր կատարած փորձարարական աշխատանքից: Աշխատանքն իրականացրել ենք մի քանի փուլերով: Առաջին փուլի նպատակն էր երեխաներին ներկայացնել հնչյունախմբերը, որն իրականացրել ենք պատին փակցված երկհնչյունների մեծ պաստառի օգնությամբ: Սկզբնական շրջանում երկհնչյունները ներկայացրել ենք երգելով՝ ցույց տալով պաստառի վրա, ապա խորանարդիկների: Նման կերպ երկհնչյունները երեխաների կողմից առավել հեշտությամբ են յուրացվում: Երկրորդ փուլն ուներ առավել գործնական բնույթ: Այս փուլում, աղյուսակի վրա ցույց տալով տվյալ երկհնչյունները, երեխաները դրանց համարժեքը գտնում էին խորանարդիկների վրա և արտաբերում դրանք: Երրորդ փուլը միտված էր երեխաների մեջ երկհնչյունների ամրապնդմանը: Այդ նպատակով իրականացրել ենք «Գնացք» խաղը, երբ երեխաները գնացքի տեսքով դասավորում էին սկզբում *ա* ձայնավոր հնչյունով վերջացող երկհնչյուններով խորանարդիկները, ապա *ի, ու* և այլն: Չորրորդ փուլի նպատակն էր տարբեր բառեր կազմելը: Երեխաներին առաջարկել ենք կազմել բառեր ըստ ցուցադրված նկարների: Հինգերորդ փուլում երեխաներն իրենք են առաջադրել բառեր և կազմել:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

- Տառաճանաչության գործընթացի նմանատիպ կիրառումն օգնում է երեխաներին առավել հեշտությամբ արտաբերելու հայերենի բոլոր հնչյունները: Վերջիններս ներկայացված լինելով երկհնչյուններով՝ ապահովում են դրանց հստակ և հեշտ արտաբերումը: Հետևապես մեթոդիկան կարող է կիրառվել նաև երեխաների լեզվական թերությունները շրջելու նպատակով:
- Մայրենի լեզվի երկհնչյունները ներկայացված լինելով տարբեր գույնի, չափի խորանարդիկների տեսքով, որոնք արձակում են նաև տարբեր ձայներ, ապահովում են մի քանի զգայարանների միաժամանակյա ինտեգրումը, որն էլ օգնում է երեխաներին հեշտությամբ կողմնորոշվել մայրենի լեզվի հնչյունական համակարգում, ճիշտ ընտրել համապատասխան երկհնչյունները և կազմել բառեր:
- Տառաճանաչության ուսուցումը խորանարդիկներով օգնում է երեխաներին հեշտությամբ տարբերել ձայնավոր, բաղաձայն հնչյունները, հեշտությամբ ձևավորվում են խոսքային կարողությունները, հարստանում է բառապաշարը:

- Ն. Ա. Զայցևի կողմից առաջադրած սկզբունքների կիրառումը, հարմարեցնելով հայերենի հնչյունակազմին, նպատակահարմար է ներդնել նախադպրոցականների խոսքի զարգացման մեթոդիկայում և արդյունավետորեն կիրառվել մանկապարտեզներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, ՀՀ ԿԱԻ, Ե.: 2008, էջ 76-78
2. Зайцев Н.А. Кубики Зайцева (учеб. пос.), Санкт – Петербург, 1989, с. 20, 38-40.
3. Каплуновская Е. Н. Тропинки к грамоте, Х.: 2014, с. 7.

РЕЗЮМЕ

ОБУЧЕНИЕ АРМЯНСКОЙ РАННЕЙ ГРАМОТНОСТИ У СТАРШИХ ДОШКОЛЬНИКАХ В СООТВЕТСТВИИ С ПРИНЦИПАМИ ПРЕДСТАВЛЕННЫМИ Н. А. ЗАЙЦЕВОМ

АМИРАГЯН М.Г., МАРУТЯН С.А.

В статье представлена проблема обучения грамотности в старшем дошкольном возрасте, которая обсуждается на основе методики Н. А. Зайцева. Сочетание согласных и гласных звуков, используемых в методике, разработано нами в соответствии с особенностями армянского языка, позволяющее детям составлять разные слова с помощью кубиков.

SUMMARY

TEACHING OF SENIOR PRESCHOOLERS' ARMENIAN EARLY LITERACY ACCORDING TO THE PRINCIPLES SUGGESTED BY N. A. ZAYTSEV

AMIRAGHYAN M. G., MARUTYAN S.A

The article introduces the problem of teaching children's literacy at senior preschool age, which is discussed basing on Zaytsev's methodology. The combination of consonant and vowel sounds used in the methodology has been developed by us in conformity with the peculiarities of the Armenian language, the usage of which allows children to make different words with the help of cubes.